

Ջ.Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

Համաշխարհային տնտեսության գլոբալ հիմնախնդրներից թերևս ամենախնդրահարույցն այսօր պարտքի հիմնախնդիրն է: Այն առավել թիրախավորվեց COVID-19 համավարակից հետո և հատկապես ռուս-ուկրաինական հակամարտության պայմաններում՝ հախտուն զարգացումների, բազմաշերտ ռիսկերի ու սպասվող բազմաբնույթ մարտահրավերների խորապատկերին: Վերջիններիս ուսումնասիրությունն ու այդ տիրույթում ազգային տնտեսական անվտանգության ապահովման հնարավորությունների բացահայտումը խիստ այժմեական են հատկապես առավել փխրուն վարքագծով երկրներում: Հայաստանի Հանրապետությունը զերծ չէ գլոբալ զարգացումների շրջանակներում համաշխարհային պարտքային ճգնաժամի մեջ հայտնվելու ռիսկից, որ հատկապես կարող է ծագել ՀՀ կառավարության արտաքին պարտքի արժույթային կառուցվածքի հնարավոր փոփոխությունների դեպքում:

Չնայած ՀՀ տնտեսական անվտանգության ուրվագծերն անչափ անհանգստացնող են աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումների ներկա պայմաններում, այդուհանդերձ երկարաժամկետում կայուն տնտեսական աճն ու դրանից բխող շրջապական զարգացումները կարող են դիմագրավել նման մարտահրավերներ:

Առանցքային բաներ. ՀՀ պետական պարտք, ՀՀ կառավարության ներքին պարտք, ՀՀ կառավարության արտաքին պարտք, ՀՀ կառավարության պարտքի հիմնական ցուցանիշներ:

Ներածություն: Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման տիրույթում զգալի ռիսկեր է պարունակում նաև արտաքին պարտքի հիմնախնդիրը, հատկապես COVID-19 համավարակից հետո: Այն է՛լ ավելի սրվեց՝ դրսևորվելով թե՛ ծավալների աննախադեպ աճով, թե՛ երկրների ընդգրկվածության շրջանակի ընդլայնմամբ, թե՛ վարկատուների աշխարհագրական կառուցվածքի էական փոփոխություններով:

Ինչպես նշվում է Համաշխարհային բանկի 2022թ. «Միջազգային պարտքի զեկույց, 2022» [1] հրապարակման մեջ, բոլոր զարգացող տնտեսությունների՝ ցածր, ինչպես նաև միջին եկամուտ ունեցող երկրների համար պարտքի հետ կապված ռիսկերն աճում են: Այսպես, 2021 թվականի վերջին այս տնտեսությունների արտաքին պարտքը կազմել է 9 տրիլիոն դոլար՝ գրեթե երկու անգամ ավելի է, քան մեկ տասնամյակ առաջ: Նույն ժամանակահատվածում Միջազգա-

յին զարգացման գործակալության երկրների ընդհանուր արտաքին պարտքը եռապատկվել է՝ հասնելով 1 տրլն դոլարի [1]: Պատճառները բավականաչափ խորքային են, մասամբ պայմանավորված են համաշխարհային տնտեսության դանդաղ տնտեսական աճով, բարձր տոկոսադույքներով, այսօր նաև ռուս-ուկրաինական հակամարտությամբ պայմանավորված՝ Ռուսաստանի Դաշնության դեմ պատժամիջոցների փաթեթների կիրառմամբ:

Թեմայի արդիականությունը և հետազոտության նպատակը: Համավարակը խորացրեց պարտքի հիմնախնդիրը Հայաստանում, այն գերազանցեց միջազգայնորեն սահմանված սանդղակը, սակայն ռուս-ուկրաինական հակամարտության տարաբնույթ ազդեցություններով պայմանավորված՝ Հայաստանում 2022թ. գրանցվեց աննախադեպ, երկնիշ տնտեսական աճ, ինչն էապես մեղմացրեց ՀՀ պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները: Այդուհանդերձ, արձանագրենք, որ համաշխարհային տնտեսության մեջ պարտքային նոր ճգնաժամի հասունացման վտանգից զերծ չէ նաև ՀՀ, թեկուզ և մեկ գործոնի, այն է՝ արտաքին պարտքի արժույթային կառուցվածքի հնարավոր տատանումների, ազգային դրամի արժևորման գործընթացի չբացառվող կասեցման պատճառով: Ասվածից եզրահանգում ենք, որ ՀՀ կառավարության պարտքի ուսումնասիրությունն առավել, քան երբևէ, արդիական է ու հրատապ լուծումներ է պահանջում:

Հետազոտության նպատակն է՝ ՀՀ կառավարության պարտքի, մասնավորապես՝ արտաքին պարտքի վիճակագրական տվյալների վերլուծության միջոցով վերհանել ոլորտում առկա հիմնախնդիրները, բացահայտել դրանցով պայմանավորված ազգային տնտեսական անվտանգությանն սպառնացող մարտահրավերները և ներկայացնել դիսկերի նվազեցմանը միտված առաջարկությունների փաթեթ:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը: Հետազոտության շրջանակներում խնդիր է դրված ուսումնասիրել ՀՀ ազգային տնտեսական անվտանգության կարևորագույն և վճռորոշ ոլորտներից մեկը, հատկապես COVID-19 համավարակի և ռուս-ուկրաինական հակամարտության տնտեսական ազդեցությունների տիրույթում, բացահայտել, մասնավորապես, ՀՀ կառավարության պարտքով պայմանավորված ազգային տնտեսական անվտանգային ռիսկերը և ներկայացնել ստեղծված իրավիճակում դրանց դիմագրավելու հնարավորությունները: Վերջինս կարող է խիստ կառուցողական և արդյունավետ լինել ՀՀ

Կառավարության կողմից իրականացվող հետագա տնտեսական քաղաքականության մշակման գործընթացներում:

Ինդրի լուծման նորույթը պայմանավորված է ՀՀ կառավարության պարտքի տիրույթում առկա իրավիճակից կախված նորագույն դրսևորումների պարզաբանմամբ, դրանց մեղմմանն ուղղված միջոցառումների իրականացման անհրաժեշտության ներկայացմամբ:


Հետազոտության համար տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել հայ և արտասահմանյան տնտեսագետների՝ հետազոտվող թեմային նվիրված գիտական հրապարակումներն ու աշխատությունները, ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի, միջազգային կազմակերպությունների և պաշտոնական վիճակագրական այլ հրապարակումներ: Հետազոտության մեջ կիրառվել են վիճակագրական վերլուծության տարբեր մեթոդներ:

Հետազոտության արդյունքները: Համաշխարհային տնտեսության տնտեսական անվտանգության ապահովման տիրույթում ռիսկեր է պարունակում արտաքին պարտքի հիմնախնդիրը, հատկապես COVID-19 համավարակից հետո: Այն է՛լ ավելի սրվեց, դրսևորվելով թե՛ ծավալների աննախադեպ աճով, թե՛ երկրների ընդգրկվածության շրջանակի ընդլայնմամբ, թե՛ վարկատուների աշխարհագրական կառուցվածքի էական փոփոխություններով: Վերջիններս է՛լ ավելի կխորացնեն աղքատությունը, քաղաքական անկայունությունը, հարկաբյուջետային ճգնաժամը [2]:

ՀՀ ազգային տնտեսական անվտանգության ապահովման շրջանակներում ոչ պակաս կարևոր նշանակություն ունի ՀՀ արտաքին պետական պարտքի, մասնավորապես՝ ՀՀ կառավարության պարտքի հիմնախնդիրը: Մեր կողմից ավելի վաղ կատարված ուսումնասիրություններում անդրադարձել ենք այս հիմնախնդրից բխող ռիսկերին [3] և ընդգծել, որ 2008թ. ֆինանսա-տնտեսական ճգնաժամից հետո իրողությունն այն էր, որ ՀՀ կառավարության արտաքին պարտքի ռիսկերից, թերևս, ամենամեծ ռիսկը փոխարժեքի ռիսկն է, ինչն ուղակի և անուղակի կապված է ՀՀ Կառավարության պարտքի մեջ արտաքին պարտավորությունների՝ դեռևս բարձր մասնաբաժնի, պարտքի կառուցվածքում լողացող տոկոսադրույքով վարկերի տեսակարար կշռի ավելացման, արտարժույթով, մասնավորապես՝ ամերիկյան դոլարով պարտքի դեռևս պահպանվող գերազանցության հետ:


Անդրադառնանք 2020-2022թթ. ՀՀ կառավարության պարտքի անվտանգային ռիսկերին: 2022թ. ՀՀ տնտեսության զարգացման առանձնահատկություն-

ներով [4] պայմանավորված՝ կարող ենք բարձրաձայնել ՀՀ Կառավարության պարտքի ներքոնշյալ ձեռքբերումներն ու սպասվող ռիսկերը [5] (նկ. 1):



Նկ. 1. ՀՀ կառավարության պարտքը և Պարտք/ՀՆԱ ցուցանիշները 2020-2022թթ. [5]

Ինչպես տեսնում ենք, ՀՀ Կառավարության պարտքը 2020-2022թթ. [6]. դրսևորել է աճի միտում: Մասնավորապես, 2022թ.այն կազմել է 10.086.4մլն ԱՄՆ դոլար, 2020թ. համամատ աճելով 2.577.9մլն ԱՄՆ դոլարով կամ ավելանալով մոտավորապես 34%-ով: Ինչ վերաբերում է Պարտք/ՀՆԱ ցուցանիշին, ապա 2022թ. այն կազմել է 46,7%, նվազելով նույնիսկ պահանջվող սանդղակից ներքև, այն դեպքում, երբ 2020թ. համավարակով պայմանավորված՝ երկրում ֆինանսական պահանջարկը լրացնելու պատճառով հիշյալ ցուցանիշը գերազանցել է միջազգայնորեն սահմանված մակարդակը, կազմելով 63,5% [6]: Բանն այն է, որ 2022թ. Հայաստանի արտարժույթային շուկայում ստեղծված աննախադեպ իրավիճակը, (ամերիկյան դոլարի ավելցուկը արտարժույթային շուկայում) պայմանավորել են վերոնշյալ ցուցանիշի նման նվազում: Եվ նման իրողության տիրույթում ամենևին չպետք է անտեսել այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում դեռևս գերակշռում է արտաքին պարտքը (նկ. 2):



Նկ. 2. ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ ռեզիդենտության, %-ով, 2020-2022թթ.[6]

Վերջինիս մասնաբաժինը ՀՀ կառավարության պարտքի մեջ ուսումնասիրվող ժամանակահատվածում ցուցաբերել է նվազման միտում 2020թ. համեմատ 2022թ. այն կազմել է 58,4%, նվազելով 16,2%-ով,ինչ անխոս դրական երևույթ է:


Սակայն երբ դիտարկում ենք պարտքի արժույթային կառուցվածքը, ապա վստահաբար կարելի է արձանագրել, որ դեռևս զգալի ռիսկեր կան ՀՀ պարտքի կառուցվածքում՝ ԱՄՆ դոլարով ՀՀ կառավարության արտաքին պարտավորությունների մասնաբաժնի առնչությամբ (նկ. 3):

2020-2022թթ. ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ԱՄՆ դոլարով և հատուկ փոխառելիության իրավունքով՝ ՀՓԻ-ով պարտքը դրսևորել է նվազման միտում. այն նվազել է 9,6%-ով, սակայն դեռևս ՀՀ կառավարության պարտքի արժույթային կառուցվածքում զգալի է կախվածությունը ԱՄՆ դոլարի փոխարժեքի տատանումներից: ԱՄՆ դոլարով արտահայտված 51,7% մասնաբաժինը [6]¹ դեռևս մարտահրավեր է ՀՀ տնտեսական անվտանգության խորապատկերին այն պարզ պատճառով, որ ԱՄՆ դոլարը դեռ իշխում է համաշխարհային արժույթային շուկայում որպես առաջատար արժույթ՝ իր աշխարհաքաղաքական ու տնտեսական բազմաշերտ դրսևորումներով ու հետևանքներով հանդերձ:

Ավելին, ՀՀ կառավարության պարտքի մարման ժամանակացույցը փաստում է, որ մինչև 2050թ. դոլարային մարումներ ենք ունենալու [6]:

¹ Ծանոթագրություն, ՀՓԻ(SDR)-ը Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից սահմանված անկանխիկ հաշվարկային միավոր, որի զամբյուղում ներառված են ԱՄՆ դոլարը, ԵՄ եվրոն, ճապոնական իենը և անգլիական ֆունտ ստերլինգը: Զամբյուղում ամենամեծ մասնաբաժինն ունի ԱՄՆ դոլարը, ուստի, մեր կարծիքով, կարող ենք դոլարային մասնաբաժինները միավորել:

Այսուհանդերձ, վերոնշյալ անհանգստությունների պայմաններում փաստենք, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ կառավարության պարտքը բնութագրող ցուցանիշների շրջանակներում նկատվել են նաև դրական միտումներ: Մասնավորապես, ինչպես արդեն նշեցինք, զգալիորեն նվազել է Պարտք/ՀՆԱ ցուցանիշը: Ձեռքբերում պետք է համարել նաև այն փաստը, որ ըստ ռեզիդենտության ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ավելացել է ներքին պարտքի մասնաբաժինը: 2020թ. 25,4%-ից այն ավելացել է ու 2022թ. կազմել է 41,6% [6]: Կնշանակի՝ անհամեմատ նվազել է արտաքին աղբյուրներից երկրի ֆինանսական կախվածությունը, նույնիսկ ավելին, ֆինանսական ռեսուրսներն սկսել են ավելի մեծ մասնաբաժնով շրջանառվել երկրի ներսում:



Նկ. 3. ՀՀ կառավարության պարտքի արժույթային կառուցվածքը, %-ով, 2020-2022թթ.[6]

Այսպիսով, կարծում ենք՝ անառարկելի է այն իրողությունը, որ վերջնարդյունքում պարտքը գոյանում է երկրի պետական բյուջեի անհաշվեկշռվածության, եկամուտների և ծախսերի անհամարժեքայնության պատճառով: Գործնականում պետական բյուջեի անհաշվեկշռվածության մեղմման անմիջական և հասանելի գործիքը մեր երկրում առայժմ արտաքին ֆինանսավորումն է: Իհարկե, փաստ է նաև այն հանգամանքը, որ վերընթաց միտումներ են արձանագրվում ներքին պարտքի հետագծում: Փաստ է նաև, որ ՀՀ կառավարության արտաքին պարտքի ռիսկերից, թերևս, ամենամեծ ռիսկը փոխարժեքի ռիսկն է, ինչն ուղղակի և անուղղակի կապված է Կառավարության պարտքի մեջ արտաքին պարտավորությունների՝ դեռևս բարձր մասնաբաժնի, արտարժույթով, մասնավորապես ամերիկյան դոլարով պարտքի դեռևս պահպանվող գերազանցության հետ: Ավելին, համաշխարհային տնտեսության ներկա և կանխատեսվող զարգացումները վկայում

են արտաքին պարտքի դեռևս չլուծվող հիմնախնդրի և դրանով պայմանավորված՝ բացասական ազդակների մասին, որոնցից զերծ չէ նաև Հայաստանի Հանրապետությունը:

Այսպիսով, ՀՀ ազգային տնտեսական անվտանգության շրջանակներում ՀՀ կառավարության պարտքից բխող ռիսկերը բազմաթիվ են, բնականաբար, մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր էլ չէ ուսումնասիրել և բացահայտել բոլոր վտանգներն ու մարտահրավերները: ՀՀ տնտեսական անվտանգության մարտահրավերներ, անշուշտ, բազմաթիվ են, բազմաշերտ և դրանց դիմակայել կարելի է թերևս մեկ ճանապարհով, այն է՝ տնտեսական աճի շարունակական ապահովմամբ: Վերջինս ենթադրում է նոր աշխատատեղեր, երկրի մրցունակության բարձրացում, ֆինանսավորվող ծրագրերի առաջնահերթությունների հստակ սահմանազատում, վստահություն վաղվա օրվա նկատմամբ և ամենակարևորը՝ պետական մտածելակերպ: Այս հարթության մեջ կարևոր ձեռքբերում ենք համարում վերջին տարիների ընթացքում ՀՀ տնտեսական աճի դրական դինամիկան, բացառությամբ 2008թ. ֆինանսական ճգնաժամի և 2020թ. Համավարակի պայմաններում նշյալ ցուցանիշի բացասական դրսևորումների: Սակայն, արձանագրենք, որ ՀՀ կառավարության պարտքը շարունակում է դրսևորել աճի միտում: Այսպես, համաձայն ՀՀ կառավարության պարտքի «Ամփոփ ամսական տեղեկագրի», 2023թ. օգոստոսի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կազմել է 10.844 մլն ԱՄՆ դոլար, որից 6 088 մլն ԱՄՆ դոլար կազմել է արտաքին պարտքը, իսկ 4 756 մլն ԱՄՆ դոլար՝ ներքին պարտքը [7]: Ընդ որում, 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատ՝ նշված ժամանակահատվածում ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ աճել է 7,5%-ով, արտաքին պարտքը՝ 3,3%-ով, ներքին պարտքը՝ 13,4%-ով [7]: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում դեռևս գերակշռում է օտարերկրյա արժույթներով ներգրավված պարտքի մասնաբաժինը, այն կազմում է 57,4%, որից միայն ԱՄՆ դոլարով պարտքի մասնաբաժինը 33,8% [7] է: ՀՀ պաշտոնական վիճակագրությունից կարող ենք եզրահանգել, որ ՀՀ կառավարության պարտքից բխող ռիսկերը դեռևս զգալիորեն պահպանվում են և կարող են երկիրը կանգնեցնել լուրջ մարտահրավերների առջև:

Այսպիսով, վերը նշված մարտահրավերներով լեցուն միջավայրում օբյեկտիվ անհրաժեշտություն է, որպեսզի Հայաստանն իր տնտեսական քաղաքականությամբ լինի առավել զգոն և ճկուն: Ավելորդ չենք համարում ևս մեկ անգամ նշել, որ ազգային տնտեսական անվտանգության խնդիրներն առավել հրատապ

և այժմեական հնչեղություն ունեն հատկապես փոքր տնտեսությամբ երկրների համար [8]: Այս տեսանկյունից վերջին տարիների ընթացքում ՀՀ տնտեսության մեջ տեղի ունեցած վերափոխումների ու վերածնունդների արդյունքում առավել հրատապ լուծում են պահանջում տնտեսական անվտանգության այնպիսի ներքին և արտաքին սպառնալիքներ, ինչպիսիք են՝ երկրի մրցունակության ցածր մակարդակը, տնտեսական աճի դանդաղ տեմպերը, արտաքին պարտքի ծավալները, ժողովրդագրական հիմնախնդիրները, արտագաղթը, օդի աղտոտվածության բարձր մակարդակը և այլն: Կարելի է թվարկումը շարունակել, սակայն փաստենք այն հանգամանքը, որ ազգային տնտեսական անվտանգության ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ-ը չի կարող գերծ մնալ գլոբալ զարգացումներից, ուստի և առկա սպառնալիքներին դիմակայելու պահանջից:

Ներկա իրավիճակում ՀՀ կառավարության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության շրջանակներում նպատակահարմար ենք գտնում.

✚ սահմանափակել դրամի արժևորման գործընթացը,

✚ «դոլարային ավելցուկն» օգտագործելու մեխանիզմներ մշակել, և ցածր տոկոսադրույքով այն տրամադրել հատկապես փոքր և միջին ձեռնարկատերերին,

✚ ձևավորել որևէ կայունացնող հիմնադրամ՝ ֆինանսական շուկաներում անկանխատեսելի իրավիճակներն (օրինակ, արտարժույթի ավելցուկ) արդյունավետ կառավարելու համար,

✚ ֆինանսական միջոցների հասանելիության և հարկային դաշտում ՓՄՁ-ի համար ձևավորել գործունեության բարենպաստ միջավայր,

✚ թե՛ հարկաբյուջետային և թե՛ դրամավարկային քաղաքականությունները կոնսոլիդացնել և դրանց հիմնական գործիքներն ուղղել գերակա նպատակների իրականացմանը:

Նշյալ հարցադրումների տիրույթում զարգացումների ճանապարհային քարտեզն ամփոփվում է երկու փոխլրացնող տիրույթներում, այն է՝ օգտվել աշխարհաքաղաքական զարգացումների ընձեռած հնարավորություններից և դրանով իսկ ապահովել Հայաստանի տնտեսական անվտանգությունը, ինչպես նաև հնարավորինս արագ տեմպերով, առանց հապաղելու ինտեգրվել չորրորդ արդյունաբերական հեղափոխությանը և թողնել մեր՝ հայաստանյան հետագիծը:

Եզրակացություն: Համաշխարհային տնտեսության ներկա անորոշ ու հախուռն զարգացումները հագեցած են բազմաշերտ ռիսկերով ու սպասվող բազմաբնույթ մարտահրավերներով, որոնց ուսումնասիրությունն ու ազգային տնտեսական անվտանգության ապահովման հնարավորությունների բացահայտումը

խիստ այժմեական է՝ հատկապես առավել փխրուն վարքագծով երկրներում: Դժվար է, ազդեցության առաջնահերթություններից ելնելով, տարբերակել ազգային տնտեսական անվտանգության ապահովման առանձին ոլորտները, սակայն, մեր կարծիքով, աշխարհաքաղաքական զարգացումների նման իրավիճակում ոչ պակաս դերակատարում ունեն ՎՎ կառավարության պարտքից բխող հիմնախնդիրները: Վերջինիս լուծմանը միտված խաթարումներից կարող են բռնկվել շղթայական հետընթաց այնպիսի զարգացումներ, որոնցից խուսանավելն անհնար կլինի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Համաշխարհային բանկ, «Միջազգային պարտքի զեկույց,2022»
<https://www.worldbank.org/en/news/press-release/2022/12/06/debt-service-payments-put-biggest-squeeze-on-poor-countries-since-2000>
2. Հաշխարհային բանկ,«Միջազգային պարտքի զեկույց»,
<https://openknowledge.worldbank.org/server/api/core/bitstreams/a5a46f28-b4d3-51ff-b665-db4c4d69fea3/content>, 2022թ.,հունիս
3. ՎՎ կառավարության արտաքին պարտքի անվտանգային ռիսկերը, հոդված,
<https://regst.wordpress.com/2020/03/20/artaqin-partq-2/>
4. **Թաղևոսյան Զ.** «Հայկական «տնտեսական հրաշքը» 2022թվականին ու հնարավոր ռիսկերը », <https://www.1in.am/3249589.html>
5. ՎՎ ֆինանսների նախարարություն, Պետական պարտքի վերաբերյալ ամփոփ տվյալներ, 2013-2023թթ. ՎՎ պետական պարտքի վերաբերյալ ամփոփ տվյալների դինամիկա,
https://www.minfin.am/hy/page/petakan_partqi_veraberyal_ampop_tvyalner/
6. ՎՎ ֆինանսների նախարարություն, ՎՎ կառավարության պարտքը 2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ, Ամսական ամփոփ տեղեկագիր, 20.04.2023թ.,
<https://www.minfin.am/website/images/files/00d0e4fa.pdf>
7. ՎՎ ֆինանսների նախարարություն, ՎՎ կառավարության պարտքը, 2023թ. Օգոստոսի 31-ի դրությամբ, Ամսական ամփոփ տեղեկագիր,
https://minfin.am/website/images/files/Monthly_Report_August_2023_am%201.pdf
8. **Թաղևոսյան Զ.** ՎՎ գիտատեխնիկական անվտանգության «դավոյան մարտահրավերները»,
<https://www.lragir.am/2019/03/05/423062/?fbclid=IwAR14rxL4f1LoV8quiVvub41KnnXzkcGKrAiD0JPbf9X3WOIRi5UdifXFxA>

ДЖ.А. ТАДЕВОСЯН

О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ ДОЛГА ПРАВИТЕЛЬСТВА АРМЕНИИ

Среди глобальных проблем мировой экономики, пожалуй, самой проблемной сегодня является проблема долга. Эта проблема стала более целенаправленной после пандемии COVID-19 и особенно в контексте российско-украинского конфликта из-за сложных событий, многоуровневых рисков и ожидаемых многогранных проблем. Вопросы изучения последних и выявления возможностей обеспечения национальной экономической безопасности в этой сфере весьма актуальны, особенно в странах с наиболее нестабильным поведением. Республика Армения не освобождена от риска оказаться в глобальном долговом кризисе в рамках глобальных событий, который может возникнуть в случае возможного изменения валютной структуры внешнего долга правительства РА.

Однако, хотя контуры экономической безопасности РА в нынешних условиях геополитического и регионального развития крайне тревожны, в долгосрочной перспективе стабильный экономический рост и вытекающие из него цепные развития могут противостоять таким опасениям.

Ключевые слова: государственный долг РА, внутренний долг правительства РА, внешний долг правительства РА, основные показатели правительственного долга РА.

J.A. TADEVOSYAN

SOME DEBT PROBLEMS OF THE GOVERNMENT OF REPUBLIC OF ARMENIA

Among the global issues of the world economy, perhaps the most problematic today, is the problem of debt. It has become more targeted after the COVID-19 pandemic and, especially, under the conditions of the Russian-Ukrainian conflict in view of the rapid developments, multi-layered risks and expected multi-faceted challenges. The study of the latter and the identification of the possibilities of ensuring national economic security in that domain are very current, especially in the countries with the most fragile behavior.

Republic of Armenia is not exempt from the risk of appearing in a global debt crisis within the framework of global developments, which may especially arise in case of possible changes in the currency structure of the foreign debt of the RA government.

However, although the contours of RA's economic security are extremely disturbing in the current conditions of geopolitical and regional developments, in the long term, stable economic growth and chain developments resulting from it can withstand such worries.

Keywords: RA state debt, RA government debt, RA government internal debt, RA government external debt, main indicators of the RA government debt.